

և վարդապետութիւնն հայհոյեցի, որպէս երբեմն բողոքէր մարգարէն պարտաւորելով զԽորայելացիսն, թէ անունն Աստուծոյ վասն ձեր հայհոյի ի մէջ հիթանոսաց. իսկ վասն բարեք կարգաց և գործոց մերոց փառաւորեսցին զՀայր մեր որ յերկինս է, ասելով, թէ՛ Առքա են զաւակք օրհնեալք յԱստուծոյ, և ուրախութեամբ ուրախացին ի Տէր. հրեշտակականսն վարուց և զյաւիտեանական կենացն նմանութիւն *). ո՛չ կաշառք և ոչ ընչից մեծարանք, այլ պարկեշտութիւն և պատուիրանապահութիւն մերձեցուցանէ լինել քաղաքակից սրբոց և ընտանի Աստուծոյ, և զուք յընչասիրութեան և ի կաշառս կործանիք, և զգարշնլիսն և ըզպատուիրանազանցս, և զզննութիւնս և ըզտգէտս հաւատարիմս համարիք ի գործս պատաւորութեան Աշկիղեցոյ, և ջորիրս ևս յաճախեալ տողէք զկնի ձեր զմերձաւորացն անսւանելոցն. զի հովուութեամբ ձերով այդուրիկ զմիսս ընտրոց ուսուցէք և զոսս նոցա վշրեցէք, կերիցուք արբցուք, ասելով, քանզի վաղին մեռանիմք, :

“Երդ եթէ յԱշկիղեցոյ կամ յԱռաջնորդս Աշկիղեցոյ դացի որ յայսպիսի պատուիրանազանցութիւն . . . ի բաց ընկնայի ի պատուէն իւրմէ, և բաժին նորա ընդ կեղծաւորս եղիցի. զի մարդ ի պատուի էր, և ո՛չ իմացաւ. զի և այլքն երկիցին. և պաշտօն հարկիս այսորիկ մի՛ եղիցի դատապարտութեամբ, այլ փառօք. ապա եթէ որ յիշխանակցաց կամ յաթոռակցաց իւրոց աշտոիցի այնպիսեաց, դա-

տեսցին առաջի Աստուծոյ ընդ այնոցիկ, որք աշտեցան շնորհուկս առնելով՝ Աննա և Ապիափայ քահանայապետից աստուածամարտ ուրացողաց և պարտականաց Տէրունական արեանն, որք տալոց են պատիժս յանապառ յաւիտեանսն, :

“Եւ մեզ եղիցի անբիծ սահմանաւ պատուիրանացս վարել զկեանս մեր պանդխտութեանս, զի յամենայնի հաճոյ լինելով Աստուծոյ, խոստացիլոց բարութեանցն արժանի լիցուք շնորհօք և մարդասիրութեամբ Տեառն մերոյ Հիսուսի Քրիստոսի, ընդ որում Հօր միանգամայն և Հոգւոյն սրբոյ տացուք զօհութիւն և փառս յաւիտեանս յաւիտեանից, ամէն, :

(Շ-բ-ն-է-է).

ԿՐԾՆ ՊԵՏՐՈՍԱԿԵԱԼ.

Այր երբեմն, կամ աւելի պարզ ասելով, մինչև ցնեղկայ Ժ-Թորդ դար՝ հալածումն և բռնութիւնն կիշնէր և կը յաջողէր այս և այն կրօնքը և ազգութիւնքը բռնաբարել և ջնջել, կամ բռնաւորին և հալածչին սեփհական եղած ազգութեան և դաւանած կրօնին հետ ի մի ձուլել :

Քրիստոնէութիւնն թէպէտ դերմարդկային քարոզութեամբք՝ արդեամբք և ըսքանչիւնք, միանգամայն Աւետարանական և Աստուածային հիանալի և զարմանահրաշ ճշմարտութեամբքն կարօտ չեղաւ և չէր այսպիսի միջոցք տարածուիլ ի մարդիկ, սակայն եղան ժամանակներ՝ զի ոմանք անձինք յանդգնեցան յանուն նորա խորամանկ նենդութիւնք մեքենայել, և ո՛րոցս նպատակներ ի փառս մարդկան և մարդկային խորհուրդք էին :

(*) Զօրինակն այսպէս պոկասէր բայն գուցէ՝

Իննևտասներորդ դարս տակաւին չք յաջողեցաւ և չարդիւնաւորեց զայն՝ ինչ որ Ազատն Աստուծոյ աղատ որդւոց և ճշմարիտ Վրիստանէութեան անհրաժեշտ պահանջն է, այս ինքն յանուն կրօնի պատրուակեալ մեքենայութիւնքը անհետացնել իրօք, և Վրիստանէական եկեղեցիքը՝ մանաւանդ Մի՛ Սուրբ՝ Առաքելական ընդհանուր Ազեղեցւոյ բաղկացուցիչ Ազեղեցիքը չբռնաբարել և նոցա ազատութիւնքը և իրաւունքները ճանաչել և յարգել:

Արդարեւ լոկ Խանի՝ չափազանց և ազատամիտ քարոզուած դադափարներ շատ կան և ի բաղում տեղիս յաճախ կհնչեն և արձագանք կգանեն, — որոց համար քանիցս կրկնած եմ, — սակայն երբ հետաքրքրութեամբ հետազօտուին և քննուին, կտեսնուին պարզ ի պարզոյ՝ զի եթէ ոչ բոլորովին՝ զէթ մեծագոյն մասն օրայնի կամ Խաբէական ձեւեր են:

Եթէ ըմբռնեմք խօսքը ի յաւելուածոյ սրտի, իսկ գործը խօսքով կարտադրուի և կարդիւնաւորի, սակայն բնական և անուրանալի ճշմարտութիւն է՝ զի ինչպէս հասարակական գործոց՝ նոյնպէս Խօսքի առանց գործոց մեղեալ է և ոչ ինչ, աստի կամիմ հետեցնել՝ որ մեր բաւական լըսածներն եթէ գործոց չենթադրուած գոնէ մնային իբրեւ խօսք, դարձեալ ըստ մեզ Խաբէ և Գործի էին, մինչդեռ նոցա գրեթէ խաղառսպուռ ներհակներն ամեն օր և ամեն ժամանակ կտեսնուին և կգործուին:

Գլխակէք ինչ են նոքա:

— Բարէ, յանուն և ի վառս Աստուծոյ խանդակութ անձուկք և մեծագործութիւնք:

Մի հաւատայք, սիրելի ընթերցողք, եթէ այսպէս են նոցա մեքեր, ինչպէս որ նոքա կըջանան միամիտները համոզել և պատրել:

Ազաքէն մեքենայութիւնքն այնպէս ակնյայտնի են, զի բանիմաց և ողջամիտ մարդիկ տարօրինակ և ցաւալի վիճակի մէջ զգուանօք կդիտեն այս տասնևիններորդ դարու պատրուակեալ շատ արդիւնքները, և կարծեմ սխալուած չպիտի լինիմ եթէ յաւելում աստանօր ցաւ ի սիրտ ասել՝ զի ապագայն մեծ տարբերութիւն չպիտի գանէ ներկայ և անցեալ անդոսներէ դարուց բաղմաց մէջ:

Գլխակէք թէ վասն էր է:

— Գլխաւորապէս բռնութեանց և հաւածանաց համար:

Յիրաւի ի հնումն սրօք, կախաղանօք և այլ մահառիթ տանջանաբանօք ի գործ կդրուէին նոքա, ուստի և ի պատմութեանց անհնարին առելութեամբք կըկշտամբվին և կդատապարտվին, և ի ներկայումս թէպէտ այսպիսի միջոցներ նուազած և գրեթէ անհետ են, սակայն երբ նպաստեալ մէջ մի և նոյն-ժամ և զուգութիւն կայ, միթէ միւս տարբերութիւնն աչքի կդարնէ նոցա՝ որոց ազգութիւնք և կրօնք ենթակայ եղած են նոյնպիսի մեքենայութեանց:

Բայտ իմ համոզմանց՝ ներկայիս պատրուակեալ մեքենայութիւնք քան զհնոցն գործս՝ առաւել ծանր և վտանգաւոր՝ միանգամայն կշտամբել և դատապարտել են ըստ ամենայնի: Ասան զի փոխանակ քաջութեամբ մեռանելոյ և նահատակուելոյ, լարուած ծուղակաց մէջ յանկարծ թաւաղվոր պիտի տապալուին կամ որսա-

ցեալ պիտի գտնուին այս և այն կրօնք և ազգութիւնք :

Թող չերկարուի խօսքը և պարզ հըն-
չուի :

Ի ներկայումս ազգութեանց և կրօնից
կործանման և ջնջման համար դպրոցներն
յարմար գործարան և կեդրոն եղած են :

Ինչ պէտք է խելահաս և բանագէտ
մարդկանց հետ ի բանակուիւ կամ այլովք
միջոցովք մտքառել , որոց մէջ խիստ շատ
անգամ մեծագումար ծախսեր և ճիգեր
շռայլելէն զկնի՝ անյաջողութեամբ և խայ-
տառակութեամբ ապարդիւն կմնային և
կմնան , և չէին կարող մտադրեալ նպատա-
կացն ժամանել :

Ուստի այս սերունդը կզոհեն . — Ի՞նչ
մեծ զոհաբերութիւն . — և յոյսերը ապա-
գայ սերնդեան վերայ կհաստատեն . վասն
որոյ՝ որքան դրամական միջոցներն կընե-
րեն , շատ կողմերում մեծ և փոքր դպրոց-
ներ և ուսումնարաններ կհիմնեն և կըբա-
նան , իբր թէ կարգահատին ժողովրդեան
տղիտութեան վերայ , ձեռք կկարկառեն և
կփութան նոցա օգնել , առաւել ևս կա-
րեկից ձեւանալով նոցա մատղաշ երկսեռ
դաւակաց վերայ , կրողձան նոցա համար
երջանիկ և բարօր ապագայ , և այսպիսի
առաքինութեամբք մեծաւ՝ կհամոզեն և
կհաւաքեն համբավամիտ և անխելահաս
մանկունքը , կաանին ի դպրոցս և յուսում-
նարանս , կսկսին իբր թէ կարդալ և գրել
ուսուցանել նոցա , և բեռնաւորելով ճըն-
շել հայն ակնախտիղ և բազմաառեակ լե-
զուներով , գիտութեամբք և առարկանե-
րով՝ իբր թէ կըմշակեն մանկանց բարոյա-
կան և մտաւորական կարողութիւնքը , և
այլ և այլ ուսմամբք կգարգացնեն և լին :

Սիրելի ընթերցողք , երեւակայեցէք այժմ
8—10—12 և լին տարեկան մանկունք և
պատանիքը , որք որոշ գաղափար չունենա-
լով և ոչ հասկանալ կարողանալով՝ կա-
րօտ՝ հետամուտ և ենթակայ են ուսանելոյ
և իմանալոյ , նոքա այնպէս թերամիտ են և
դիւրաթեկ՝ զի կարելի է սեն սպիտակ և
սպիտակն սև է հասկացնել և համոզել
զնոսա . այսպիսի վիճակի մէջ երբ կը յանձ-
նուին նոքա ո ոք և իցէ մի փնտսակար և
թշնամի անձի խնամոց և դաստիարակու-
թեան , և երբ ծնողքն անտարբերութեամբ
և անխտիր գաղափար կըմբռնեն այս և այն
անձի վերայ՝ և կամ զուրկ են ինքնին ճանա-
չելոյ կարողութենէ , մանկունքն կը հպատա-
կին նոր խնամակալին , և այնուհետեւ տա-
կաւ առ տակաւ՝ մանաւանդ երբ խնամակա-
լն և դաստիարակն փաղաքշանօք և սիրա-
լիւ խնամարկութեամբք գիտենայ շոյել և
հրապուրել մանկական անձնասիրութիւն-
քը և զգացումները , և երբ արտաքուստ և
կողմնակի հակաթեւադիրներ ևս չգտնու-
ւին , անշուշտ մանկունքն անձնատուր և
ըստ ամենայնի անձնանուէր կլինին խնա-
մակալին և դաստիարակչին կամոց , մինչև
անգամ երախտագէտ համակրութեամբք՝
ծնողացն վերայ տաճած սէր և եռանդէն
առաւել զգացմունք կնուիրեն նոցա , և
այսպէս կուսանին և կխմորուին հակա-
ռակ գաղափարներով և զգացումներով ,
կատեն անգամ իւրեանց ծնողաց և ազգի
կրօնը և հարազատ եղբայրքը և համարին
սերունդը , կամ թէ ոչ՝ գոնէ այնքան կը
թունաւորուին՝ որ առ ծնողան՝ ազգն և
կրօնն անհրաժեշտ եղած ջանից և զգաց-
մանց մէջ անտարբեր և մեռեալ կապրին :
Որպիսեաց թիւ որքան որ յաճախ և բազմ-

մապատկի, այլ ևս անտարակուսելի և անխուսափելի կլինին այս և այն աղգի և կրօնի կորուստ և խապառ անհետ ջնջումն. և ահա այսպէս թշնամւոյն նպատակ և ճիգեր ևս կպսակուին:

Ո՛հ, քանի՜ որ մտածուի, որքա՞ն հեղձամղձուկ կյուզին և կարեւրէր ի խոց կրգալարին աղիք զգայուն և բանխմաց կրօնասիրաց և ազգանուիրաց:

Իսկ եթէ՝ ընդհակառակն՝ բարեմտութեամբ ըմբռնվին նոցա (ոսոխաց) այսպիսի դործողութիւնքը և ի բարին մեկնուին, ի՞նչ մեծ և յիշատի յանուն և ի փառս Աստուծոյ առաքինութիւն և մեծագործութիւնք պիտի գտնեմք:

Իայց արդարեւ այսպէ՞ս է:-- Ոչ երբէք:

Վասն զի եթէ օտարաց նպատակներն բարի էին և են՝ ևս ի սէր մարդկութեան ջանադիր, ո՞չ ապաքէն կջանային օրինաւոր չափահասից ևս այլովք միջոցովք բարերարել, և եթէ երբէք դժուարութիւնք երեւակայուէին վարժարանաց համար, դոնէ արհեստանոցներ կբանային ամեն տեղ՝ ինչպէս կբանան ուսումնարաններ, և այն սերընդեան ի նպաստ ևս բարեգործութիւնք կառատաձեռնէին ի սէր մարդկութեան:

Եթէ Արհեստանոց բանալով՝ ոչ միայն արհեստները ծաղկեցնել, այլ ըստ տեղւոյն կարեւոր և օգտաւէտները տարածելն իսկ առաքինութիւն չէ, և արդեօք որքա՞ն երիտասարդներ՝ թէ և չափահաս՝ բայց և այնպէս երախտադէտ զգացմամբ կզիմէին Արհեստանոցներ՝ իւրեանց պիտոյ եղած և ակորժած արհեստները ուսանելոյ և իւրեանց կենցաղավարութեան մէջ այն կողմանէ ևս զիւրութիւններ և նպաստներ գտանելոյ բաղձանօք:

Սակայն ի՞նչ հարկ կըստիպէ երկարաբանել, մինչդեռ նոքա կլնտռեն հաճախութիւնը և ճանկոնքը, որպէս զի նոցա մտաւորական անդաստանաց և բարոյականութեան մէջ զիւրաւ և առանց ընդդիմութիւն կրելոյ սերմանեն իւրեանց որոմները, զորս երբէք չկարողանալով կամ աւելի արդիւնաւոր չյաջողելով չափահասից և բանագիտաց մէջ՝ հեշտեաւ և փութով կխայտառակուէին ինքեանք և մեքենայութիւնքն ի փառս մարդկան:

Մանաւանդ եթէ յիշեմք և երեւակայեմք արեւելից նկատմամբ Ամերիկայի և այլ տեղեաց հեռավարութիւնքը և կենցաղավարութեանց տարբերութիւնքը, ո՞վ կհաւատայ՝ և մի՞թէ նոցա պէտքն և հոգան է արեւելից մէջ զօ. Հայոց ժողովրդեան տգիտութեան համար, զի Ամերիկացիք գան ի Հայաստան և Հայոց ուսուցանեն Հայերէնը և այլ ուսմունք և առարկաները:

Հայեր, ՀՀաւատամք և չխաբուիմք սոյնպիսիներէն, մի՞թէ ի տատասկէ թուզ՝ և ի փշոյ խաղող կքաղուի, մի՞թէ Ոսպերթեանի նման օտար ուսումնարաններ մեր բարութիւնքը և օգուանները կըղձան և կհաղորդեն: Այո՛ կբաղձան զայս միայն, զի պատրին և մերկացնեն Հայերը իւրեանց մայրենի կրօնէն, և հեռացնեն Հայաստանեաց Առաքելական եկեղեցիէն, և զորին օտար ազգութեանց մէջ: Ահա այս և այսպէս է և պիտի լինի օտարին ջանք և ուսումնատուութեան և դաստիարակչութեան նպատակ, զոր յարմար դատած է և կըտքնի մեր երկսեռ մանկանցմէ սկսանիլ և հաղորդել:

Ոչ տպաքէն օտարն միշտ օտար է, ուստի նա և նպատակն և ջանքն յաւէտ օտար պիտի լինի վասն մեր:

Շարունակեմք:

Իսկ եթէ Վրիստոնէական պարտաւորութիւններէն հրապուրեալ մարդասիրութեանց արդիւնք պատճառաբանութիւն յոմանց, դարձեալ պէտք է խորհիլ, զի անցան զնացին այն դարեր՝ զի մինչ Վրիստոնէական կծաղիւր և կտարածուէր, այլ և այլ ազգեր ի սէր Վրիստոսի և հաւատոյ՝ առանց խտրութեան և մեքենայութեանց, Ակեղեցւոյ Հայրապետք և վարդապետք անկեղծ զգացմամբք ի մի կգումարուէին, և կխորհէին և կգործէին կրօնի ուղղափառ և ողջամիտ դաւանութեան և Ակեղեցւոյ բարեկարգութեան և պայծառութեան համար. նոցա մէջ մեքենայութիւնք և խտրաւանութիւնք չկային այս և այն ազգութեանց ի կուստ. իսկ երբ յաջորդեցին այնպիսի դարեր՝ յորս կրօնական միութեան կեղծ անուան ներքեւ ծաղեալ էին այլ և այլ խորամանկ դադափարներ և աշխարհային օտար մտքեր, այնուհետեւ Ակեղեցւոյ Սուրբ Միութեան մէջ անձնասիրութիւնք և փառասէր մոլութիւնք կվիտային և կը գործէին ի նախատինս, կջանային ընդհանրական ժողովներ ձեւել, սակայն չէին գործեր երբեք յօգուտ՝ ի փառս և ի պայծառութիւն Ակեղեցւոյ:

Վրիստոնէական տարածուեցաւ բազում ազգաց մէջ, Ակեղեցւոյ մէջ յաճախեցան բազում հերձուածներ և աղանդներ, ոմանք փութով անհետացան, ոմանք երկարեցան և մի քանիներն ըստուարացան: Սոցա հետ մէկ տեղ բազ-

մաթիւ սկզբունքներ և դադափարներ յաճախեցին և տարածուեցան: Բայց ամենալուսնաւորն եղած և միշտ է կրօն պարտաւորալ, որոյ ներքինը որքան քողարկեալ ծաղեալ է, այնքան ևս բազմա վնասնգ նպատակներ ունի:

Յիրաւի պարտաւորալ կրօնի արբանեակներն ոյք որ լինին՝ ինքեանց համար բարի են ջանքերն և նպատակներն, սակայն նոքա Վրիստոնէական Ակեղեցւոյ ոգւոյն՝ նպատակին և քարոզութեանց ոչ թէ միայն մեղապարտ կհակառակին, այլ և բազում աղէաց մէջ խռովութիւն երկարաւիտութիւն սերմանելով և կորստաբեր լինելով՝ յաւէտ անգոսնելի և դատապարտելի են ողջամտութեան և ազատ մարդկութեան առաջ:

Արդ այսպիսի կրօն պարտաւորալ զանազան նպատակաց և ջանից ներքեւ ձեւուած և ծաղուած կը սողոսկի բազում ուրեք Հայոցս մէջ. գործողութեանցն մէջ բարի և զիւթիչ երեւոյթներ կան և կտքնին ցուցանել, բայց Ազգասիրաց սրատես աչքերէն երբեք խուսափել չեն կարող և ոչ իսկ կապշտպանութիւն: Սեր Ազգիտագնապալից և բազմախորտ վիճակ, օտարաց և թշնամեաց հեղեղանման և հզօր մեքենայութիւնք՝ շատ դառնաղէտ վնասնգի մէջ կներկայացնեն Հայաստանեայց Ակեղեցին:

Բայց պիտի վհատեմք յուսահատ:— Վա՛ւ և մի լիցի երբեք:—

Պէտք է քաջութեամբ դէմ դնել և քաջ ախոյեան հանդիսանալ թշնամւոյն դէմ՝ որքան ևս ծանր լինի վնասնգն:

Արդարեւ այսպիսի փոթորիկներ շատ տեսնուած են մեր մէջ՝ և Աստուծոյ ող-

նականութեամբն միշտ յաղթած և անպարտ ընդ աշխարհի, սակայն այժմ հարուածն կտրուկ և ծանր է, և կըտրուի Հայոց մատաղ կամ ապագայ սերնդէն սկսեալ, վասն որոյ ըստ այնմ պէտք է մեզ սպառազինուիլ և պաշտպանողական զիջք բռնել:

Միանգամայն պէտք է աշխատիլ՝ որ Հայոց մանկունք հեռու մնան օտար և փոստակար ուսմունքներէ, և երբեք չը խրկուին այնպիսի ուսումնարաններ՝ որոց մէջ կրօնն պարտաւիշակ է, և վերջապէս ըստ գործոցն և արդեանց՝ ձեւեալ են նը պատակներն և ջանքերն, զորս կոչուին անգամ կարող են դիտել և հասկանալ:

Այսուհետև հոգեւոր հովուաց և Քահանայից պարտքերն անհրաժեշտ կը պահանջեն անքուն հսկել ժողովրդեան և յաւէտ Հայ մանկանց դաստիարակութեանց վերայ, և միշտ զգուշաւոր պաշտպանութիւն նուիրել նոցա:

ՎԱՆԸՄ ՎԱՐՊԱՊԵՏ ՄԱՆԵՈՒՆԻ:

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

ԹԵՄԱԿԱՆ ՎԵՐԱՏԵՍՈՒՉԷ.

Ներկայ ժամանակիս մէջ դաստիարակութեան կարեւորութիւն և նշանակութիւն որքան զգալի է գրեթէ ամենեցուն՝ զայն մեկնելոյ կարօտութիւն չկայ, ըստ որում ամեն լուսաւորեալ ազգաց մէջ կենսական թիւրքի հանդիսացած՝ գրեթէ բազմաց ջանքերն և ուշադրութիւնքն դրաւած է:

Թէ ո՞րքան անհրաժեշտ և օգտաւէտ է այս, ընդ այս քաջ խելամտելոյ համար

բաւական է մի ուսումնական և մի արդէտ անձանց մէջ բաղդատութիւն կշռել:

Բայց միայն ուսումնական և զիտնական անձինք պատրաստեն՝ բաւական չէ մի ազգի յառաջագիմութեան, զի Տէրութեանն պահպանութիւնը կարող է ո՛ր և իցէ անձի ուսումնականութիւնը ոչ միայն ոչնչութեան մատնել, այլ միանգամայն բազում նախատինքներ հեղուկ նորա գլխոյն, և ուսմանց դէմ ժողովրդական հակակրօնութիւն գոյացնել:

Աւստի ընդ մտաւորականին և բարոյականութեամբ զարգացեալ և հմտացեալ բարեկիրթ ուսումնական անձինք պատրաստելոյ համար կարեւոր են բարեկարգ և օրինաւոր ուսումնարաններ և դպրոցներ, որոց համար ևս անհրաժեշտ է անխոնջ և արթուն հսկող և հետեւող վարչութիւն և կանոնադրութիւն, որպէս զի ուսմունքն և զիտութիւնքն բարի արդիւնք և հետեւանք ծնանին ի մարդիկ:

Ըստ այսմ մեր Ազգի մէջ ևս որքան և հետզհետէ առաւել մեծ կարեւորութիւն և կարօտութիւն կզգամք դաստիարակութեան կենսական խնդրոյ առթիւ, նոյնքան ևս պարտաւոր ենք արթուն հսկողութեան և բարեկարգ վարչութեան ենթարկել, որպէս զի Հայկազն մանկունք փոխանակ օգտուելոյ և զարգանալոյ ի բարիս՝ չթու նաւորվին:

Վասն որոյ Վ. Է. Հայրապետ չբաւականացաւ ուսումնարաններ և դպրոցներ ի բազում տեղիս հիմնել և բանալ հրամայելով և հետեւելով, և թեմակ. Առաջնորդաց պարտաւորութեանց ծանրութիւնք արգելք լինելով դաստիարակութեան խնդրոյ և ուսումնարանաց և